

առնելով, կը կարծէի թէ ես միայն ազէկութիւն մը կ'ընեմ այնպիսոյն :

— Ես ալ, ըսաւ Անդրէաս, կը խոստովանիմ որ տիրոջս համար աշխատելով մտքէս ամենեին չէի անցուներ թէ ինքն ալ իր կողմանէ ինծի ծառայութիւն մը կ'ընէր. կը տեսնեմ որ պարտական եմ :

— Այս ամեն բանը, բարեկամքդ իմ, անկէ առաջ կու գայ որ մենք աղէկ չենք ըմբռներ որ և իցէ բան : Եթէ մենք մարդկանց հետ վերաբերութիւն ունենալով, փոփոխակի մեր վիճակը մտածէինք, աւելի բարեսիրտ կ'ըլլայինք իրարու նկատմամբ : Ալ չիմոռնանք ուրեմն որ ամեն գործերնիս մեր նմանեացն հետ ծառայութեանց փոխանակութիւն են. եթէ աղէկ յիշելու ըլլար այս ճշմարտութիւնս՝ կը տեսնէք թէ ինչպէս կը փոխէ ու հաճոյական կ'ընէ ձեր վերաբերութիւնները բովանդակ աշխարհի հետ, և ապահով եղէք որ մեր այսօրուան խօսակցութեան ամենամեծ արդիւնքը կ'ըլլայ :

— Շնորհակալ ենք, Պ. Տիրբէ, պիտի չիմոռնանք, ըսին հանդիսականք՝ և մենքն ցրուելով :

ՌԱՐԷ

Կը շարունակուի :

Մ Ո Ւ Թ Ք Է

Այս մեծանուն և աշխարհատէր զորավարին յաջողամիտ ռազմագիտութեւն արդիւնք են Բրուսիացւոյ 1866-ին Աւստրիական պետութեան բանակաց վրայ տարած անակնկալ ու արագ յաղթանակներն : Բայց իր արդէն հռչակաւոր անունը՝ պատերազմական արուեստին ոգի և հանճար մը ընողը՝ վերջին Գաղղիական-Բրուսական արիւնհեղ պատերազմներովն ու յաղթանակներով եղաւ :

Հելմուլթ կարողոս Բեռնարտ, Մոլթքէ պարոնը Մէքլէմպուրկի Կուէվից քաղաքը ծնած է 1800ին : Առջի բերանը

Տանիմարքայի ծառայութեան մէջ մըտնելով, 1822ին սկսաւ Բրուսիոյ ծառայել. ու քիչ ատենէն ճարտար ու կորիճ հարիւրապետի մը անուն հանեց. անանկ որ շուտով զինուորական աստիճաններու մէջ յառաջագիմելով, 1835-ին զօրավար եղաւ :

Նոյն տարին Օմանեան զինուորութեան նորոգիչ Մուլթան Մահմուտի հրաւիրանօք և իր տէրութեան հրամանաւ արեւելք գնաց, առաջիւրանակը նոր զինուորական հրահանքներով բարեկարգելու համար. նոյն առթիւ 1839-ին Ասորոց երկրին պատերազմին մէջ մտաւ :

Բրուսիա դառնալով Հենրիկոս իշխանին անձնապահապետ անուանեցաւ : Բայց նոյն արքայազուն իշխանին վաղահաս մահուամբը չկրցաւ երկարատեն շարունակել իր պաշտամանը մէջ : 1856ին մեծ սպարապետ ու Փրեզերիկ Գուլիելմոս իշխանին անձնապահապետ կարգեցաւ. 1857ին ալ ընդհանուր տեղակալ անուանեցաւ :

1859ին Բրուսիա յօժարամիտ ու պատրաստ էր ՚ի դաշնակցութիւն Աւստրիոյ, և այն ատենէն ինչուան Հռենոսի ափունքը տանիլ արիւնոռոգ պատերազմի մը արհաւիրքը, եթէ յանձնառու ըլլար Աւստրիա այն դաշնակից օգնականութեանը փոխարէն թող տալ Բրուսիոյ Գերմանական դաշնակցութեան զինուորական ուժոյն գերագոյն հրամանատարն ըլլալ. բայց Աւստրիա չուզելով իր Գերմանիոյ մէջ ունեցած նախադահուլթիւնը նուազեցընել, միայնակ ու անօգնական մնաց իտալիոյ ու Գաղղիոյ դէմ : Այն ատեն Մոլթքէ առիթ ունեցաւ Աւստրիոյ վերին հրամանատարութեան բանակետղին մէջ իբրև պարզ հանդիսատես մը քննել այն պատերազմին ընթացքը, և գրի վրայ առնուլ. և որ ետքը տպագրեցաւ ալ Պատերազմ իտալիոյ ՚ի 1859 կոչուած :

1864ին երբոր Շլէզվիկ-Հոլշթայնի խնդիրը ելաւ, Մոլթքէ ընկերացաւ Փրեզերիկ կարողոս իշխանին Տանիմարքայի դէմ զրկուած բանակին հետ : Ինքը



Մ Ո Ւ Թ Ք Է

1866ին Աւստրիոյ դէմ տրուելիք պատերազմին խորհուրդը ու միջոցները մը տածեց . և ինքը դարձեալ իբրև հետևակախումբ զօրաց սպարապետ՝ Սատովայի պատերազմէն ետքը՝ իր յաղթական բանակին առաջնորդ կենալով արագութեամբ կը վազէր Օլմիւցի ու վեննայի վրայ, ու օգոստոսի 2ին զինագաղարման ու խաղաղութեան նախագիծ պայմաններուն ստորագրեց : Բայց շատ անգամ ալ սենեկէն դուրս չելլելով, զօրաց շարժմունքը ու պատերազմները կ'ուզէր, ու կը յաղթանակէր : 1866ին պատերազմաց յաջողութեան փոխարէն՝ Սեաւ Արժւոյ կարգը և ճոխ ոսճիկ մը տրուեցաւ իրեն : Իրեն դարձեալ յանձնուեցաւ Հիւսիսային Գերմանիոյ

դաշնակցութեանց զինուորական ուժոյն միութեան գործը : Թէպէտ և խորհրդարանի անգամ է Մովթըէ, բայց միայն ան ատենը մասնակից է՝ երբ զինուորական խնդիրներ յուզուին :

Իտալիոյ պատերազմին վրայ գրածէն զատ՝ ուրիշ քանի մը զինուորական գրուածներ ալ ունի . ինչպէս Արշաւանք Տաճիկ-ռոշարակսն ՚ի Տաճկաստան Եշրոպիոյ, Թոշոք զվիճակէ Տաճկաստանի յամս 1835-39, և այլն : Հմուտ է Մովթըէ, և այլևայլ լեզուաց կատարեալ տեղեկութիւն ունեցող . բայց որովհետև բնութեամբ լուրջ է և լուութիւն սիրող, առած եղած է ըսել թէ եօթը լեզու լսել զիտէ :

ԱՆ Հ Ե Մ Ե Լ Ի Ո Ր Ձ Ի Ք

Օրերուս աշխարհագոյժ և բազմադէտ զիպուածոց մէջ՝ մարդկային ընկերութենէ անդին ալ՝ ցաւագին և սրտաշարժ բաներ հանդիպած են . որոց մէկն ալ կ'ըսուի թէ Սետանայ պատերազմին երկրորդ օրն եղաւ . երբ զինուորական փողն կը հնչէ՝ 602 ձիք առանց ձիաւորի, կէս ողջանդամ կէս խեղանդամ, ոմանց վրայ դեռ համետքն և կազմածքն մնացած՝ կը փութան կ'երթան իրենց առաջուց սահմանեալ փռանկաց բանակին կարգը կը շարունակեն . բայց ձիաւորքն չեն երևիր : Ոմանք Բրուսիացուց բանակին մէջ հանդիպած է կ'ըսեն այս բանս : Առջինը ստոյգ սեպեւ, լով Ամերիկացի տիկին մը՝ Պարզլեդ անուն՝ հետևեալ տողերը գրեր է՝

Ծագէ առաւօտ ի սարս Սետանայ .
 Եւ արեգական ճառագայթք ոսկի՝
 Տարածին ժայռից և անտառաց վերայ ,
 Ի վերայ բերդին ամրապարբսպի ,
 Ի վերայ հովտի գետոյն Մողելայ ,
 Եւ ճամբարապատ՝ գետնին այն վերայ՝
 Ուր ցըրուած գունդերըն գան մէկտեղին
 Լըսելով զհրնչում սուր գալարփողին :
 Բայց արեւն երեկ վերէն նայեցաւ
 Մըթին սեւագին ահեղ նայուածով ,

1 Բանակներ շարուած :